կարդի լուսաւորութեան համար Փարիզումը ամենի համար բաց են և դիւրամերձ վեց ահագին լսարաններ և երեք Կոլլէժներ, (որոնց ոմանց մէջ համարումեն մինչև 3000 ուսանողներ), 273 նախակրթարաններ, որոնք պահվումեն քաղաքի հաշուով և 1056 մասնաւոր դպրոցներ. և առհասարակ բոլոր պատանիների թիւը, որոնք ուսանումեն այս դպրոցներում, հաւասարումէ 158,000 հոգւոյ. Իսկ Ֆրանսիայի ամեն գիտութեանց և ուսումնարանական հաստատութեանց գլխաւորն է «Ֆրանսիայի ինստիտուտ» կոչուածը, որ բաղկանումէ հինգ ճեմարաններից, այն է 1. Ֆրանսիական ճեմարան, 2. Արձանագրութեանց և գեղարուեստական գրականութեանց ճեմարան, 3. ճեմարան գիտութեանց. 4. ճեմարան ազատակոն արուեստից կամ ճարտարութեանց և 5. ճեմարան բարոյական և քաղաքական գիտութեանց. Այս հինգ ճեմարանների անդամ հրաւիրվումեն ամենից հոչակուած մարդիկ, ամենից աւելի հեղինակութիւն ունեցող ներկայացուցիչները զանազան գիտութիւններից, արուեստից և այժմեան գրականութեանց ամենանշանաւոր տաղանդաւորներից. Անդամութեան հրաւէրը Ֆրանսիական Ինստիտուտի ճեմարաններից մէկի համար, ոչ միայն Ֆրանսիայի սահմանում, այլև բոլոր աշխարհի մէջ համարվումէ ամենամեծ պատիւը, որը կարող է ձեռք բերել ուսումնականը կամ արուեստագէտը. Արուեստների և գիտութեանց գործնականապէս ուսումնասիրելու և կատարելապէս սովորելու համար, Փարէզը մատակարարումէ իւրաքանչիւր արուեստի և ճարտարութեանց պարապողի տնօրէնութեանը անսպառ հարստութեան դանձերի նպաստ, որ դարերով ժողոված է Փարէզ քաղաքում.

(Շարունակելի)

(Թարգմ.) Զ. Տ. Զաքարեանց.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԲԷԼԻ

ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԱՀԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՆՈՒՆԻՈՑ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Եթէ թատրոնն ընդունվումէ իբրև նախակրթարան հասարակաց՝ անշուշտ նորանում ներկայացնելու նիւթն և առարկան պէտք է ունենայ դէպի բարոյականութիւն յորդորող միակ նպատակ, որի մէջ իբրև պարզ հայելի՝ իւրաքանչիւր ոք տեսնի իւր անցեալն, ներկայն և ապագայն. մոլին իւր մոլութիւնն տեսնի ու գարշի զզուանքով և առաքինին՝ իւր ուղղութեան մէջ խրախուսուի.

Գ. գործողութիւնը կատարվում մի խոտաւէտ դաշտի մէջ.
Զգեստներ կըլինին միայն մաշկեղէն. կանանց գլխներն՝ ծաղկապսակ.

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Ա.

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

ԱԲԷԼ ԵՒ ԹԻՐԶԱՑ.

ԹԻՐԶԱՑ

Իմ սիրելի կենակից Աբէլ, աղաչում եմ, եթէ քեզ ձանձրութիւն չէ, շնորհ արա երգել քո օրհներգն՝ փառաբանել Աստուծուն՝ ձայնակցելով այս քաղցրախօս սոխակին (սոխակի ձայն է լսուում վարդենոյ վերայ). Ա՛հ, ինչ ախորժ զգացմունք է տիրում սրտիս երգածդ ժամանակը.

ԱԲԷԼ.

Իմ չքնաղագեղ լուսնեակ Թիրզայ, ինձ աւելի ախորժելի է կատարել քո ցանկութիւնը, մանաւանդ թէ պարտականութիւնս է միշտ օրհներգս կրկնել, որով և իմ խորին երախտագիտութիւնս յայտնել այն յաւիտենական Բարւոյն, որ այսչափ բարիք է շնորհել մեզ վայելելու. ահա խաչինքս կշտացած հանգիստ մակաղել են առուակի վերայ, ես երգեմ, դու ձայնակցիր ինձ. (երգում է).

Բուրումն սրտիս քեզ, ո՛վ Ցէր *),
Ելցէ յեթերս ի նուէր.
Զնշոյլ լուսոյդ տուր մեզ դու,
Քեզ միշտ լինիլ օրհներգու.

Մրջիւնք, թռչունք և ձկունք,
Սողունք, խոսունք, հոգեշունչք
Քեզ միշտ լինեն օրհներգու,
Երգեն սուրբ, սուրբ, սուրբ ես դու.

Զքեզ օրհնեն մեր լեզուք,
Զքեզ գովեն բոլոր շունչք.
Զորս կոչեցեր ի չըգոյէ դու
Լինիլ Էիգ օրհներգու.

Զի քեզ երկինք գլխովին,
Երկիր ողջոյն՝ լոյս եկին.
Որք զտիւն միշտ և գիշեր՝
Զքեզ օրհնեն ի յեթեր.

(*) Այս երգը առանց ա տառի է.

Ընդ որս և մեք մոխիր հող,
Ի մէջ փոշւոյս զքեզ օրհնող.
Խնդրեմք ի քէն ձեռնտու
Լինել Էիդ օրհներգու։

ԹԻՐԶԱՑ.

Ա՛հ, ինչպէս դէպ ի վեր է սրանում մտքիս թռիչքը, քաղցրանուագ երգոյդ հետ օրհնել յաւիտենական Բարին, որ զքեզ ինձ պարգևեց ինչպէս արեգակը՝ երկրին, և առուակը՝ բոյսերին. միշտ իմ առանձնութեանս մէջ պիտի փառաբանեմ Նորան ցնծալից արտասուօք։

ԱԲԻԼ.

Քեզ նման և ես, սիրելիդ իմ Թիրզա, միշտ գոհութիւն նուիրել եմ և պիտի նուիրեմ Նախախնամութեան, որ զքեզ ինձ համամիտ օգնական ու ընկեր սահմանեց, լուսնից պայծառ, վարդից գեղեցիկ, գարունից զուարթ և գառից հլու։

ԹԻՐԶԱՑ.

Ա՛հ, երանի՜ թէ շրթունքս կարող լինէին պատմել քեզ սրտիս զգացմունքը և սիրոյս հաւաստիքը, որին չափ և սահման չըկայ։

ԱԲԻԼ.

Սիրելիդ իմ Թիրզայ, սիրոդ սրտիս հետ է խօսում, առանց լեզուիդ շարժմանց և շրթանցդ բաբախմանց՝ սիրտս զգուէմ սիրոյդ որքանութիւնը (Ադամ ու Եւայ ծածկաբար գալիս են ծառի տակ և ունկընդիր են լինում). և ես չեմ կարողանում պատմել սէրս, այսչափ միայն կարող եմ ասել որ, ես կըսիրեմ քեզ ինչպէս կեանքս. առանց քո ներկայութեան ցերեկն ինձ փոթորկալից գիշեր է թուում, գառներս իսկ զգալով սէրս, միշտ այն տեղերն են կամենում արածել և չըհեռանալ այն տեղից, ուր քո նազաձեմ ոտներդ կոխել են։ (Ադամ և Եւայ մտնում են)։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱԴԱՄ ԵՒԱՑ, ԱԲԻԼ ԵՒ ԹԻՐԶԱՑ.

ԱԴԱՄ.

Փա՛ռք քեզ Աստուած, որ ինձ երեսիցդ բոլորովին չըձգեցիր. եթէ իմ յանցանքիս չափով ինձ պատժէիր, ի՞նչ պիտի լինէր իմ վիճակը. որդւոցս առ միմեանս և առ Քեզ ունեցած սուրբ սէրն մեծ մխիթարութիւն է ինձ երկրիս վերայ, որ դրախտի ստուերն է. փա՛ռք քեզ Աստուած, որ այսպէս մխիթարումես մեզ. (գրկում է Աբելին)։

ԵՒԱՑ.

Գոհութիւն քեզ Աստուած իմ, որ քաղցր մխիթարութեամբ լեցնումես սիրտս, քանի՜ մեծ է քո գթութիւնը, որով հաւասարապէս

խնամարկուժես քո բոլոր արարածներին։ Աստուած իմ, այս սուրբ սիրոյ կայծը իմ անդրանիկ որդի Կայինի սրտի մէջ ևս ծագիր, որ գոհ լինի իւր վիճակով, անտրտունջ ճաշակէ իւր քրտամբք վաստակը և սիրէ քեզ ու իւր եղբայրն։ (Կային մնանումէ)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԿԱՑԻՆ.

ԿԱՑԻՆ.

Այս ի՞նչ շփոթ է, այս ի՞նչ գրկախառնութիւն. ես շարունակ արևակէզ աշխատեմ, դուք հանգիստ զուարճութեան մէջ սիրոյ գրկախառնութեամբ զմայլէք, և ինձ աստուածատեաց, եղբայրատեաց և անգոհ համարելով դատապարտէք. դուք խնդրումէք Աստուծուց սրտիս մէջ սիրոյ բորբոք, բայց ձեր այդ վարմունքը եղածն էլ մարել է սպառնում։ Ես ծառի տակից լսումէի ձեր խօսքերը, և ձեր տրտունջն. միթէ ես ատո՞ւմեմ Աստուծուն, որին դառն քրտանցս պտուղներից շատ անգամ զոհեր եմ մատուցել։ Միթէ Աբէլ աւելի՞ է սիրում Աստուծուն և ինձ. նա ի՞նչ ապացոյց ունի իւր սիրոյն, իւր տղայական ե՞րգն. դա անգործ ճպռան պաշտօն է, ոչ թէ մարդոյ. նա զոհումէ Աստուծուն իւր գառներն՝ որ ոչ ինքն է ծնել և ոչ կերակրել և ոչ ևս իւր քրտինքը պէտք է համարել. նա բնաւ չէ սիրում ինձ. այլ անգործ նստած իւր խաշանց մօտ զբօսնումէ Թիրզայի հետ։

ԱԴԱՄ.

Կայի՛ն, որդեակ իմ Կային . . .

ԿԱՑԻՆ.

(Ընդմիջելով) Իսկ ես դժոխային երկրագործութեանս մէջ արևակէզ եմ լինում՝, ոչ հանգստանալու պարապոյ ժամեր ունիմ, և ոչ խաղաղ քուն, ամոլներս արեգակից նեղուելով փախան լեռները, իմ թշուառութեան բաժանակից Միհալան էլ որոնելու է գնացել. իսկ Թիրզան՝ ծնօղաց և Աբէլի ուրախութեան քաղցր հրճուանքի մէջ է ծփում. ա՜հ, անգո՛ւթ մայր, ինչո՞ւ ծնար մեզ, անպտուղ լինէր որովայնդ (կամենումէ հեռանալ. Ադամ արգելումէ բռնելով)։

ԱԴԱՄ.

Կայի՛ն, իմ անդրանիկ Կային, կաց, մի՛ գնար։

ԵՒԱ.

Ո՛հ, իմ որդի, խնայիր արտասուքներիս. գթա՛ մեզ։

ԿԱՑԻՆ.

Ինչո՛ւ ես արգելում ինձ. թող գնամ իմ թշուառութեան վերայ առանձին ողբամ. աչքերդ և դէմքդ ինձ յանդիմանութիւն են սպառնում։

ԱԴԱՄ.

Այո՛, Կային, քո այդ կերպ ընթացքովդ դու յանդիմանութեան արժանի ես։

ԿԱՅԻՆ.

Այո՛, ես յանդիմանութեանդ միայն արժանի եմ և ոչ սիրոյդ, վասն զի այդ զգացումն միմիայն Աբելի և Թիրզայի համար էք պահել։

ԱԴԱՄ.

Ո՛չ, խաբվում ես, Կային, վկայ է ինձ երկինք, որ այս արտասուքներս և այս տրտմութիւնս՝ գորովալէտ սիրոյ նշան են։ Կային, եթէ դու սիրուես մեզ՝ փութա սրբել մեր արտասուքը։ եթէ Աստուծոյ երկիւղի մի կայծ դեռ կայ սրտիդ մէջ, քեզ այն սուրբ կայծի վերայ եմ երդուեցնում։ դարձրո՛ւ դէպի մեզ մեր հալածական և հեռացեալ ուրախութիւնը։ բաւական է որդի, բաւական է սրտիդ մէջ ոխ ու նախանձ, ատելութիւն և դժգոհութիւն սնուցանես։

ԿԱՅԻՆ.

Ի զո՛ւր խրատ . . .

ԵՒԱ.

(Ընդմիջելով) Կային, իմ որդի, ի՞նչ է քո տրտմութեան պատճառը։ չըգիտե՞ս, իմ որդի, որ մեր պահապան հրեշտակներն անգամ ուրախութեան հանդէս են կատարում՝ երբ մեր վերայ առաքինութեան գործեր և բարի նպատակներ են տեսնում։ մեր ուրախութիւնը, գրկախառնութիւնը և անուշակ զմայլումն Աբելի անբիծ առաքինութեան համար է միայն։

ԿԱՅԻՆ.

Է՛հ մայր, ինչքան կամենումէք այնքան ուրախացէք Աբէլի վերայ։ ես չեմ կարող բաց թողնել իմ այրական բնութիւնը և կանանցօրէն արտասուք թափել որ և իցէ բերկրական առարկայի վերայ։

ԱԴԱՄ.

Խաբվումես իմ որդի, քո բնութիւնը այրական բնութիւն չէ, այլ գազանական դառնութիւն է այդ։ խէթ է և ատելութիւն որ բոլոր գործոցդ մէջ՝ թէ քեզ դառնացնումէ և անգոհ է անում և թէ մեզ տրտմեցնումէ։ Ինչո՞ւ գոհ չես քո բաժին երջանկութեան վերայ։ ո՛չ ապաքէն բաց են քո առաջ բնութեան բարեաց աղբիւրները։ մի՞ գուցէ հրեշտակաց վիճակին հասանել ցանկանումես, բայց գիտացիր որ հրեշտակաց մէջ ևս դժգոհներ գտնուեցին, որոնք Աստուած լինել ցանկացան, սակայն սխալուեցին և երջանկութիւնից զրկուեցին։ Արթնացիր որդի, արթնացիր, էլ բաւական է ատելութիւն և անգոհութիւն աչքիցդ գողանան երջանկութեանդ աղբիւրները, որ գոհացող սրտերի բաժին են։

ԿԱՅԻՆ.

Ինձ ոչինչ օգուտ չունին խրատներդ. ինչպէս կարող եմ երջանիկ լինել, քանի որ չեմ կարող հրաման տալ մրրկին չըկատաղել, կամ գարնան հեղեղին յետ դառնալ. Անիծեալ կնոջ անիծեալ ծնունդ եմ ես և դատապարտութեան ենթակայ.

ԱԴԱՄ.

Չէ, Կային, դու թշուառութեան մէջ ծնել չես. Աստուած ոչ մի արարած թշուառ լինելու համար չէ ստեղծել, թշուառ կամ երջանիկ լինել քո կամքից է կախուած. Ասա՛ Կային, դու երջանիկ չէ՞իր համարում քեզ, երբ մտքիդ մէջ ծագած չէր ատելութիւն և դառնութիւն քո հարազատիդ դէմ. և կամ դժգոհութիւն քո վիճակի վերայ.

ԵՒԱ.

(Լալով) Ա՛հ Կային, դու մեզ նախատո՞ւմես. միթէ մոռանումես որդիական պարտականութիւնդ. վա՛յ ինձ. օգնեցէք. Կային, գթա՛ իմ վերայ, ո՛հ . . . (ուշքը գնումէ).

ԿԱՅԻՆ.

(Շուարած) Ո՛հ, այս ի՞նչ արի ես. կոյր դատողութիւնս ո՛ւր յափըշտակեց ինձ. (Եւայի ձեռքից բռնելով). Մայր իմ, սթափուիր, ներէ ինձ, ես խոստանումեմ սիրել ձեզ և հնազանդել. Հայր իմ, ներէ յանցանաց, որ կոյր կատաղութիւնս ինձ գործել տուեց. ահա խոստանումեմ սիրել Արէլին (Արէլի ձեռքը բռնումէ).

ԵՒԱ.

(Ուշքի գալով) Կային, իմ որդի, դու սիրո՞ւմես ինձ, սիրո՞ւմես քո եղբայրը. ո՛հ կրկնիր խոստումնդ.

ԿԱՅԻՆ.

Այո՛, այո՛, ես այսուհետև պիտի սիրեմ ամենիդ ես.

(Ադամ ու Եւայ գրկումեն Կայինին, Կային և Արէլ գրկախառնըվումեն, Թիրզան ստէպ ստէպ համբուրումէ Կայինի ձեռքը).

ԱԴԱՄ.

Որդեակ իմ Կային, իմ անդրանիկ Կային, Աստուած երկնքից տեսնէ քո զիղջդ և օրհնէ քեզ. ո՛հ ինչպէս ի բաց փարատուեցին տրտմութեանս լեռնակուտակ ալիքները. Օրհնեա՛լ օր, խաղաղութեա՛ն օր, դրախտի ստուե՛ր օր. Փա՛ռք քեզ Աստուած, դու ես մեր ամենի հայրն ես, ուրախ կըլինիս երբ դէպ ի քեզ ենք դիմում.

ԱԲԷԼ.

Սիրելի եղբայր, պէտք է մոռանալ անցեալը, էլ մի՛ յիշի՛ր իմ մանկական անգիտութեամբ գործած սխալները. մեր անցեալն թող խսպառ

անհետ լինի երազների նման։ Ո՞չ ապաքէն գիշերուան սոսկալի երազներն և նոցա աղդած վշտերն առաւօտը բոլորովին փարատուած են լինում. ո՛հ Կային, երանի թէ կարող լինէի սրտիս ցնծութեան կէսն պատմել քեզ, բերնիս բարբառ պակասում է, ուրախութիւնից միայն լալ կարող եմ և քեզ գրկել ու ձեռներդ համբուրել, (համբուրում է Կայինի ձեռքը լալագին դիմօք)։

ԵՒԱ.

Իմ սիրելի որդիք, այս ուրախութիւնս դրախտի ուրախութիւն եմ համարում, տրտմութեանս սև ամպերն փարատուեցին գլխիցս. պայծառութիւն և բերկրութիւն պատեց ինձ, պտղաբեր ծառի նմանեցի, որ իւր քաղցրահամ պտղով ամենի ճաշակն քաղցրացնում է. Եկէք համբուրեմ ձեր ուրախութեան արտասուաց քաղցր կաթիլները, որ եղբայրական սէրն բղխել է տալիս, (համբուրում է Կայէնին և Արէլին.)

(Միհալայ կըմանէ)։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՄԻՀԱԼԱՑ.

Ո՛հ, այս ի՞նչ ուրախութեան հանդէս է, պատուական ծնողք իմ և սիրելի եղբարք, ո՛հ ինչ բարերաղդութիւն է այս. Ես եղներս շատ տեղեր որոնելուց յետոյ, երբ դատարկ դէպի բնակարան էի դառնում, տեսայ որ երկուքն ևս կուշտ արածած՝ նստած էին մեր վարդենեաց տակը. եկայ ձեզ յայտնելու, և ուրախութեան աւետիս տալու, բայց ձեր ուրախութիւնն աւելի է. ո՛հ ինչ ուրախալի օր։

ԱԲԻԼ.

Միհալայ, քոյր իմ. այսօր սիրոյ դաշինք կապեցինք։ Իմ անդրանիկ եղբայրս Կային ուխտեց միշտ սիրել ինձ. այսուհետև ուրախութիւնն է մեր բաժին։

ՄԻՀԱԼԱՑ.

Քոյր իմ Թիրզայ, այսօրուայ սիրոյ ուխտը հանդիսաւոր անելու համար երթանք գեղեցիկ ծաղիկներ և քաղցրահամ պտուղներ քաղենք մեր սեղանի վերայ սփռելու։

ԹԻՐԶԱՑ.

Գնանք։ (Մեկնումեն)։

ԵՒԱՑ.

(Ադամին, Կայինին և Արէլին) Ուրեմն գնանք և մենք մեր բնակարանի մէջ ուրախութեան սեղան պատրաստելու և Աստուծոյ գթութեան գոհութիւն մատուցանելու. (սկսումեն մեկնիլ. վարագոյրը իջնում է)։

(Շ-ը-ն-կ-ի-լ է)։

Թատրոնի օգտակարութեան առթիւ արդէն պատեհութիւն ունեցել եմ փոքր ինչ ընդարձակ գրելու անցեալ թուոց Արարատայ մէջ, այժմ կրկնաբանել աւելորդ համարելով՝ մի համառօտ ծանօթութիւն տալով այս փոքրիկ աշխատասիրութեան մասին՝ կըվերջացնեմ խօսքս։

Սողոմոն Կեսների ի մահ Աբելի ընտիր ու կրթական բանաստեղծութիւնն գրեթէ Եւրոպական բոլոր ազգեր թարգմանած են իւրեանց լեզուով, և լոյս աշխարհ հանած տպագրութեամբ. Հայ ընթերցասէրք ևս բաղդ ունեցել են ի շնորհս Վենետկի Մխիթարեան միաբանութեան քանիցս տեսնել ու վայելել նորա կրկնակի հրատարակութիւնն։

Այս ընտիր և բաղմակողմանի կրթական գրուածքն թատերական բեմի վերայ տեսնելու շատերի փափագն ի նկատի ունելով՝ սորանից 15 տարի յառաջ աշխատեցի գրաբառից աշխարհաբառի վերածել թատերական ձևով. զոր և մի քանի անգամ Վանայ մէջ ներկայացնելու բաղդն ևս ունեցայ. այժմ ևս բարեկամներիս յորդորանքով համարձակուեցի լոյս աշխարհ հանելու՝ խոստովանելով միանգամայն՝ որ Կեսների այս պատուական բանաստեղծութիւնն թատերգութեան ձևի վերածելու համար աւելի ճարտար գրչի և հմուտ թատերգուի կարօտ էր։

Ընթերցողը կըտեսնի որ ես աւելի նմանող (հետևող) եղած եմ Կեսներին քան թէ թարգմանող. շատ սակաւ անգամ հեղինակի իսկական խօսքերը մէջ եմ բերել և այն ևս դարձուածներով, համառօտելով և կամ ընդլայնելով. և վստահ եմ որ ամեն ոք ներողամիտ կըլինի ինձ, երբ նկատէ որ ես երբեմն կամաւ շեղած եմ բնագրի ընթացքից ըստ պահանջման հարկին՝ կամ յաճախ ակամայ թերութեան մէջ ընկած՝ թատերական գրուածոց և ներկայացնելու եղանակին քաջ հմուտ չըլինելով և կըպահանջէ շատ ունեւորիցը շատ, իսկ սակաւից՝ սակաւ։

Աշխատողը.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Ադամ.
Եւայ.
Կային.
Միհալայ քոյր և կին Կայինի.
Աբէլ.
Թիրզայ քոյր և կին Աբէլի.
Ենոք վեցամեայ որդի Կայենի.
Անամելէք սատանայ.
Ռափայէլ հրեշտակ.

Ա. գործողութիւնը կատարվումէ պարտիզի մէջ վարդենու տակ։
Բ. գործողութիւնը կատարվումէ մի հաստաբուն և սաղարթախիտ ծառի տակ։